

## ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

### ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ

Հայ բառարանագրության հիմքերը դրվել են Հայ մատենագրության սկզբնավորման հետ՝ V դարի 30–40-ական թվականներից: Գրերի գյուտից երկու–երեք տասնամյակ անց Հայաստանում բուռն զարգացում է ապրում թարգմանական և ինքնուրույն մատենագրությունը: Հունարեն ամբողջական բնադրից կատարվում է Աստվածաշնչի լավագույն թարգմանությունը, իսկ հունարենն էլ իր հերթին թարգմանվել էր եբրայերեն բնագրից: Եվ դա է պատճառը, որ եբրայերեն շատ բառեր, մանավանդ Հատուկ անուններ Հայերենին են անցել հունարեն ձևից: Ըստ Հր. Աճառյանի եբրայերենից Հայերենին են անցել 138 բառ և 98 Հատուկ անուն<sup>1</sup>: Ինչպես Աստվածաշնչում, այդպես էլ Հայ մատենագիրների երկերում հանդիպում ենք անծանոթ բառերի, Հատուկ անունների ու բառակապակցությունների բացատրությունների. այդ օտար բառերը բացատրված կամ թարգմանված են տվյալ բառի կողքին: Նախ Աստվածաշնչից բերենք նման մի քանի օրինակներ:

«Եւ անեն զնա ի Գողգոթա, տեղի մի, որ թարգմանի տեղի կառափելոյ»<sup>2</sup>, որտեղ գողգոթա բառը նշանակում է «կառափնարան, գլխատման տեղ»:

«Ելին ընդ առաջ նորա, աղաղակէին եւ ասէին, Ովսաննա, օրհնեալ որ դասդ յանուն Տեառն, թագաւորդ Իսրայէլի»<sup>3</sup>, որտեղ ովսաննա բառն ունի «օրհնության ձայն» իմաստը:

«Եւ յայտնի եղեւ ամենեցուն, որ բնակեալ են յԵրուսաղէմ, մինչեւ կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց Ակեղդամա, այսինքն է՝ Գեղարեան»<sup>4</sup>: «Եւ ի Յոպպէ էր կին ոմն աշակերտեալ անուն Տաբիթա, որ թարգմանեալ կոչի Այծեմնիկ»<sup>5</sup>:

Ինչպես երևում է բերված օրինակներից, տվյալ բառերը ոչ միայն բացատրված են, այլ նաև ստուգաբանված: Նման երևույթների հանդիպում ենք նաև V և Հետագա դարերի մեր մատենագիրների երկերում. ինչպես, օրինակ՝ «Զրուան ոմն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք»<sup>6</sup>: «Վասն որոյ կարծի թէ էր ինչ ընդ նմա, որում հիւզն անուն էր, որ է նիւթ»<sup>7</sup>, որտեղ հունարեն հիւլէ՝ ὕλη գոյականը թարգմանված է «նյութ»:

1 Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. մաս 2, Երևան, 1951, էջ 56, 63:

2 Մարկ., ԺԵ, 22:

3 Յովհ., ԺԲ, 13:

4 Գործք առաքելոց, Ա, 19:

5 Նույն տեղում, Թ, 36:

6 Եզնիկ Կողբասցի. Եղծ աղանդոց. մաս 2-րդ, Ա. Վենետիկ, 1826:

7 Նույն տեղում, մաս 1-ին, Բ:

Մ. Խորենացին իր պատմութեան երկրորդ գրքի ն հատվածը վերնագրել է. «Թէ որպէս շինեաց զԲագարան քաղաք կոոց», որտեղ բագարան ըստը և՛ բացատրված է, և՛ ստուգաբանված:

Մինչև X դարը երկուս հանդիպող անհասկանալի բառերի բացատրութեանը նախ տրվում էին բնագրում բառի կողքին, ավելի ուշ լուսանցքում, և ապա՝ գրքի վերջում: Դա նշանակում է՝ մինչև այդ դարը բառարաններ բառի իսկական առումով չեն եղել, այլ եղել են բառացանկեր: Հետագա դարերում մեր ձեռագրերում հանդես են գալիս տարբեր տեսակի բառարաններ: Մեր ձեռագիր և XVII դարի երկլեզվյան տպագիր բառարանները պարարտ հող են նախապատրաստում գրաբար բառարանագրութեան նոր փուլի զարգացման համար: Այդ փուլն սկսվում է 1698 թ., Արևիկոնայում (Լիվոնոն) երեմիա Մեղրեցու անունով լույս տեսած «Բառգիրք հայոց»-ով: Գրաբարի այս առաջին տպագիր բացատրական բառարանը կազմվել է «Բառք քերթողականք», «Բառք եբրայեցւոց», «Բառք յունարէն», «Բառք Փիլոնի», «Բառք խորանին», «Եւթներորդ գլուխ դրոցս» ձեռագիր և Ֆրանչիսկո Ռիվոլայի (1621 թ.), Կղեմես Գալանոսի (1645 թ.) հայերեն-լատիններեն, Աստվածատուր Ներսեսովիչի (1695 թ.) լատիններեն-հայերեն տպագիր բառարանների հիման վրա: Այնուհետև ԲՀ-ն ունեցել է երկու վերահրատարակութուն (1728, 1975 թթ.):

«ԲՀ»-ում գլխաբառերը հիմնականում բացատրված են հոմանիշներով, և շատ քիչ գլխաբառերի համար ընդարձակ բացատրութուններ են տրված, օրինակ՝

Ազգ — սեռ կամ ցեղ. Ազինք — մանր ազդեր, որ չեն անուանիք.

Կայմն — քեղին է նաև, որ զառագաստն սվարեալ<sup>9</sup> ունի ի վերայ իւր, որ ի ծայր սեանն է, որ զառագաստն սփռեալ ունի ի վերայ նաւին:

Իր թերութուններով հանդերձ, «Բառգիրք հայոց»-ը մինչև Մխիթար Սեբասացու բառարանի հրատարակութունը լայնորեն օգտագործվել է հայոց դպրոցներում, իսկ դրանից հետո էլ մեր բոլոր բառարանագիրները՝ Մ. Սերաստացին, Մ. Ավգերյանը, Հ. Ավգերյանը, Գ. Փեշտմալճյանը, Մ. Զախջախյանը, Ն. Բյուզանգացին, Հ. Աճառյանը և ուրիշներ, իրենց բառարանները կազմելիս օգտվել են «Բառգիրք հայոց»-ից:

Խմբագրութունից խմբագրութուն փոխվել է բառարանի բառապաշարն ու աճել բառաքանակը, այսպես՝ առաջին հրատարակութունն ունեւր 8130, երկրորդը՝ 8650, իսկ երրորդը՝ 8832 բառ:

Գրաբարի բառարանագրութունը գնալով կատարելագործվում է թե՛ բառարանի կազմութեան սկզբունքներով, թե՛ բառապաշարի ընդգրկմամբ, թե՛ գլխաբառի բնութագրմամբ: Այս առումով շատ մեծ է Մխիթարյանների գերը հայ բառարանագրութեան (և ոչ միայն գրա) զարգացման գործում:

XVIII դարի կեսերից սկսած հանգես են գալիս բացատրական, թարգմանական բառարաններ, որոնք իրենց կազմութեան սկզբունքներով միանգամայն նոր փուլ են բացում հայ բառարանագրութեան պատմութեան մեջ:

8 Տե՛ս Հ. Մ. Ա մ ա լ յ ա ն. Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V-XV դդ.). Երևան, 1966 (XVI-XVII դդ.), Երևան, 1971:

9 Բառգիրք հայոց (այսուհետև՝ ԲՀ) 1975 թ. հրատարակութունում վարեալ:

Գրաբարի առաջին ընդարձակ բացատրական բառարանը Մխիթար Աբբաստացու «Բառգիրք Հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս Հատորս» (Վենետիկ, 1749թ., 1769 թ.) աշխատանքն է: Մ. Աբբաստացին բառարան կազմելը համարում է շատ մեծ ու տանջալից աշխատանք: Այդ մասին բառարանի առաջաբանում կարդում ենք. «...մանաւանդ մեզ, որք յանձն առաք զգործ մեծ և տանջալի. վասն զի՝ թէ զինչ է կազմել զբառգիրք, ոչ ոք գիտէ, բայց միայն նա, որ յօրինեալ իցէ երբեք զնոյն: Եւ այլ եւս քան զեւս ծանրանայ մարդոյ, եթէ ոչ ունիցի առընթեր զբառարանս ինչ»<sup>10</sup>: Միևնույն ժամանակ նա նշում է, որ իրեն օգնող բառարաններ չի ունեցել իր ձեռքի տակ, իրեն ամենևին չի օգնել նաև ԲՀ-ն, որովհետև «...փոքր բառգիրքն Հայկական դրեալ է միաբառ մեկնութեամբ... և ի բազում տեղիս մեկնող բառքն առաւել խրթին են, քան զմեկնելիս»<sup>11</sup>: Աբբաստացին բառարանն այնպես է կազմել, որ օգնի բոլոր Հայերին կամ միայն գրոց լեզվին փափագողներին: Դրա համար նա գլխաբառերը բացատրում է ոչ թե միայն մեկ բառով, այլ շատ բառերով. «Դարձեալ զբառս մատենիս ախորժեցաք առաւել բազում բառիւք մեկնել, քան միաձայն բառիւ»<sup>12</sup>: Այստեղ նրա նպատակը շատ պարզ ու որոշակի է՝ այդ բառի հոմանիշներից մեկը իմանալով՝ բառարանից օգտվողը կարող է հասկանալ տվյալ բառի իմաստը և ճանաչել գլխաբառը:

Բառերի իմաստներն ու կիրառությունները ճշգրտորեն հասկանալու համար նա շատ հաճախ գրաբար մատենագրությունից բերում է բնագրային վկայություններ, իսկ «...գլուխ ամենայնի սոցա է Աստուածաշունչն... որ է ովկիանոս գերապանձ բառից»<sup>13</sup>: Ի դեպ, բառարանագրության առաջին փուլում քրիստոնյա գրեթե բոլոր ժողովուրդների բառարանագրության հիմնական ատաղձը Աստվածաշունչի և կրոնական այլ երկերի բառերն ու գրանց բացատրություններն են<sup>14</sup>:

Բառարանում գլխաբառերը տրված են այբբենական կարգով, մի սկզբունք, որը հեշտացնում է բառարանից օգտվողի գործը: Ի տարբերություն ԲՀ-ի՝ ՀՀԲ-ն ունի գլխաբառի քերականական նշումներ, այսինքն՝ նշված են թեքվող բառերի քերականական կարգերը: Անունների սեռական հոլովածներ շատ հազվադեպ է տրված որպես առանձին գլխաբառ, իհարկե, ամեն դեպքում հղում է արվում ուղղականին: Օրինակ՝ Դրգան, տես Դուրգն, Խուան, տես Խուուն և այլն:

Հոլովվող բառերից հետո նախ նշվում են դրանց հնագույն ձևերը, և ապա հետագա դարերում հանդես եկող նոր հոլովումները. օրինակ լեզու-լեզուի, աւ, աց, օք, և ապա լեզուոյ, ով, ոց, ովք. կամ մեղր-մեղու, և ապա մեղեր. կամ թանձր-թանձու, և ապա թանձեր և այլն:

Մխիթար Աբբաստացու բառարանը մեր առաջին նորմատիվ բառարանն է, որն ընդգրկում է գրաբարի գրեթե ամբողջ բառապաշարը: Բառարանի

10 Մ. Աբբաստացի. Բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՀՀԲ). հ. 1, Վենետիկ, 1749, էջ 4:

11 Նույն տեղում, էջ 4:

12 Նույն տեղում, էջ 6:

13 Նույն տեղում, էջ 9:

14 Տես, օրինակ, Ա. Շ. К о в т у н. Русская лексикография эпохи средневековья. М. — Л., 1963, с. 390.

կիրառական նշանակությունն արժեքավորվում էր նաև նրանով, որ այն կազմված է տվյալ ժամանակի համար ընդունված ուղղագրություններով: Օրինակ՝ նիարդ, նշլեհ, շոքորդ, ոպոպ սխալ ձևերի համեմատ ճիշտ ու ընտիր ձևեր են համարված նեարդ, նփլեհ, շոլոքորթ, յոպոպ ձևերը: Այդ մասին Մխիթար Սեբաստացին անում է հետևյալ նշումը. «... առ այսու բառարանա եղեւ ընդհանրական և մանրակրկիտ քննութիւն բառից. և որ ինչ ստուգագոյն և սեպհականագոյն էր լեզուի մերում եկն ի յայտ. և մեք ըստ այդմ գրեցաք»<sup>15</sup>:

Բառահոգւմանը ունեն հետևյալ կառուցվածքը. գլխաբառից հետո տրված են թեքվող բառերի հոլովման և խոնարհման քերականական կարգերը, բառիմաստի բացատրությունը, բարբառային («ուսմկորէն»), երբեմն նաև թուրքերեն (հայատառ նոտրգրով) համարժեքները, որոշ դեպքերում էլ՝ աղբյուրները:

Ինչպես և սպասվում էր, ՀՀԲ-ն ԲՀ-ի համեմատ ունի մի շարք առավելություններ, ինչպես օրինակ՝ բառապաշարի ավելի լայն (եթե չասենք լիակատար) ընդգրկում, ստուգաբանություն, հիմնական և երկրորդական իմաստների առանձնացում ու բացատրություն, վկայությունների աղբյուրների նշում և այլն: Այդ բառարանների միջև եղած տարբերությունները ցույց տալու համար դրանցից բերենք նույն բառահոգւման օրինակը:

ԲՀ, 1698 թ.

Ագապ. սէր:

ՀՀԲ, հ. 1, 1749

Ագապ. ի, աւ, աց, օք: // Է բառ յունական, որ նշանակէ սէր կամ ախորժակ: Դարձեալ ագապ կոչի կերակուրն, զոր պատրաստեն աղքատաց ի սէր Քրիստոսի. և ըստ այսմ ագապ անուանի և անասունն, զոր զենեալ եփեն, և բաշխեն կարօտելոց ի պատիւ Աստուծոյ: Ի գիրս կանոնաց, և Յովհաննու իմաստասիրի: Դարձեալ ագապ յորջորջիւր առ նախնեօք խրախճանն. կամ սեղանն, զոր պատրաստէին հաւատացեալքն ուտել ի գաւիթս եկեղեցւոյ զկնի հաղորդութեան, որպէս բառն սէր: Ի գիրս կանոնաց:

Տարբերություններ են նկատվում նաև ՀՀԲ-ի առաջին և երկրորդ հատորների միջև: Հիմնական տարբերությունն այն է, որ տվյալ գլխաբառով կազմված հարադրությունները երկրորդ հատորում ավելի շատ են, ինչպես նաև դրանք առանձնացված են ու տրված նոր տողից:

Բառարանում երբեմն նշվում են բառերի գործառական ոճերը. օրինակ՝ Տկճոր. ի. իւ. ից. իւք կամ օք: // տիկ գինւոյ, և մանաւանդ այն՝ զոր օձեալ են կպրով, տաճկ. խրչայ: Բայց սա մանաւանդ ի ռամկական բարբառ ի գործ ածի. վասն զի գրոց լեզուաւ կոչի՝ հագաղակ<sup>16</sup>:

Մխիթար Սեբաստացու բառարանն ունի մեկ առավելություն ևս. դա այն է, որ դրանում թվարկված են տվյալ գլխաբառի հնարավոր բոլոր հոմանիշները. օրինակ՝ Ժողով — ժողով, գումար, գումարտակ, դասակ, պարունակ, երամակ, երամ, երաստ, հանգէս, փաղանդ, փալանդ, կաճառ, կայճառ, խնջոյք, խնճոյք, համուռ, ջոլիւր. կամ՝ գունդ, խումբ, բոյլք, հոյլք, աղխ, ախք, ջոկ, տարմ, մառն, ըամ, պար, դաս, ծիր. կամ այսպէս՝ բազմու-

15 ՀՀԲ. հ. 1, էջ 18:

16 Տե՛ս ՀՀԲ. հ. 1, էջ 1126:

թիւն, գումարութիւն, եկեղեցի, սիւնհողոս, գաւազան, հանգանակ, հրապարակ, ուխտ, ազի:

Բառարանի այդ արժանիքը ըստ արժանվունյն գնահատել է պրոֆ. Աշոտ Սուքիասյանը. «Հոմանիչների տպագիր առաջին բառարանը, որ պարունակում է շուրջ 35 հազար բառ, պետք է համարել 1769 թ. Վենետիկում լույս տեսած Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» երկրորդ հատորում գետեղված «Բառգիրք յաշխարհաբանէ ի բրաբառն նոյնանշան բառից յարադրութեամբ» վերնագրով աշխատութիւնը»<sup>17</sup>:

Սեբաստացու բառարանի երկրորդ հատորում տեղ են գտել նաև Աստվածաշնչում և այլ գրքերում գործածված հատուկ անունների երկու բառարան, որոնք ևս կազմված են այբբենական կարգով, գլխաբառից հետո տրված են քերականական նշումներ, և ապա հատուկ անվան բացատրութիւնն ու գործածութիւնն տեղը. օրինակ՝

Ղուկաս. սու կամ կայ: // լատիներէն ստուգաբանի լուսաւոր, իսկ եբրայերէն, նմա յարութիւն: է անուն միոյն ի չորից աւետարանչացն, որ և դրեաց զգիրս գործոցն առաքելոցն...:

Սողոմ. կամ Սոգոմ. կամ Սօգոմ. այ: // գաղտնիք նոցա. կամ կիր. կամ շաղախ նոցա: է անուն քաղաքի, որ էր գլխաւորն հնգից քաղաքաց երկրին սողոմացոց, զորս կործանեաց Աստուած երկնատեղաց հրով և ծծմբով: Ծննդ. 19. 24 ...:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀԲ-ի երկրորդ հատորի կազմում կա նաև այլ աղբյուրներից քաղած ու կազմած մեկ այլ բառարան, որում նույնպես հատուկ անունները բացատրված են, ստուգաբանված, նշված են փոխատու լեզուն, գործածութիւնն աղբյուրները և այլն: Օրինակ՝

Ագաթանգեղոս. ի. իւ: // է բառ յունաց. և թարգմանի բարի հրեշտակ. կամ քաջ աւետաւոր. է անուն աջող քարտուղարի սրբոյ մեծին Տրդատայ արքայի Հայոց, որ գրեաց զվարս և զքարոզութիւն սուրբ Լուսաւորչին և զդարձն հայաստանեայց ի հաւատս Քրիստոսի: Խորենացի, Բ պրակ 64:

Ինչպես հետագայում պարզվեց, այդ ստուգաբանութիւններից շատերը ճիշտ չէին, բայց, ինչպես նշում է էդ. Աղայանը, «... մեզ համար կարևորը այդ մի քանի բառերի ստուգաբանութիւնն ճշտութիւնը չէ, այլ հիմնական սկզբունքը, որով նա միանգամայն ճիշտ կերպով որոշում է լեզուների փոխազդեցութիւն, իրարից բառեր փոխ առնելու երևույթը»<sup>18</sup>:

Այսպիսով, ՀՀԲ-ն, որոշ վերապահումներով, կարող ենք համարել բացատրական, ուղղագրական, ստուգաբանական, հոմանիչների և հատուկ անունների բառարան, որի երկու հատորները միասին պարունակում են 100 հազար բառ:

Որոշ թերութիւններով հանդերձ՝ ՀՀԲ-ն գրաբարի լավագույն բացատրական բառարաններից մեկն է, որն ուղի բացեց հետագա ավելի կատարյալ բառարաններ կազմելու համար: Մեր շատ մտավորականներ, մշակույթի գործիչներ հիացմունքով են խոսում այդ բառարանի մասին: Մ. Չամչ-

17 Ա. Մ. Ս ու է ք ի ա ս յ ա ն. Հայոց լեզվի հոմանիչների բառարան. Երևան, 1967, էջ 5:

18 Է դ. Բ. Ա ղ ա յ ա ն. Հայ լեզվաբանութիւնն պատմութիւն. Հ. 1, Երևան, 1958, էջ 128:

յանը գրում է. «Արար դարձեալ գործակցութեամբ աշակերտաց իւրոց և գմեժ գայն բառգիրք զգանձարան լեզուիս հայոց»<sup>19</sup>:

Բառարանը բարձր է գնահատում նաև Փրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին: «Անշուշտ, — գրում է նա, — այդպիսի վիթխարի գործ մը չէր կրնար առաջին իսկ փորձէն վերջին աստիճանի կատարելութեան հասնիլ, թէեւ շատ կը մօտենար. երկրորդ հատոր մըն ալ անհրաժեշտ էր յաւելուածներու համար: Այդ երկրորդ հատորը Մխիթարը ինքը նախատեսած էր, գիտենալով որ իր այս գիրքը հիմ մըն էր եւ ոչ տակաւին գագաթ: Այլ անխախտ հիմ մը, որուն վրայ իր աշակերտներն ու հաջորդները կրցան կառուցանել այնպիսի հրաշակերտ շինութիւններ, զորս եթէ ի վիճակի ըլլային իրենց կատարած գործերուն հետ բաղդատելու, շատ մը ճեմարաններ կրնային նախանձիլ Մխիթարեան ճեմարանին վրայ»<sup>20</sup>:

Հայտնի է, որ առանց բառարանի առկայութեան, լեզուն կարող է աղավաղվել: Այգպես էլ հայերենն անընդհատ աղավաղվում էր ենթարկվելով օտար զանազան ազդեցութիւններին: Այս առումով ՀՀԲ-ն ունենալու նաև նորմավորող նշանակութիւն: Հովհաննէս Թորոսյանը Մխիթար Սեբաստացուն նվիրած իր աշխատանքում գրում է. «Ամէն մարդ ըստ քմաց կը խեղաթիւրէր, կ'աղճատէր լեզուն, և չգիտնալով հայերէն բնիկ բառերը, անսովոր ու խորթ բառեր կը հնարէին: Հարկ էր անոնց առջև ամբարտակ մը կանգնել, և ազատել լեզուն խառնակութեան վհին մէջ գլորելէն. այդ ամբարտակն եղաւ «Բառգիրք հայկազեան լեզուի» (խոսքը ՀՀԲ-ի մասին է — Գ. Թ.), աննման իւր տեսակին մէջ, դարագլուխ կազմող գործ մը»<sup>21</sup>:

Մխիթար Սեբաստացու աշակերտները, հետևելով իրենց ուսուցչի խորհուրդներին, հայերենը մաքրեցին լատինաբանութիւններից, գրականութեան մեջ ըստ հնարավորին վերականգնեցին մեսրոպյան շրջանի գրաբարը և հիմքեր ստեղծեցին կազմելու ավելի կատարելագործված բառարան, ինչպիսին եղավ «Նոր հայկազյան բառարանը» (այսուհետև՝ ՆՀԲ):

ՆՀԲ-ի հեղինակներ Գ. Ավետիքյանը, Խ. Սյուրմելյանը, Մ. Ավգերյանը, օգտվելով ՀՀԲ-ից և օգտագործելով Վենետիկի Մխիթարյանների ձեռագրատանը եղած մոտ 1000 ձեռագիր մատյան, շուրջ հիսուն տարում կազմեցին ժամանակի բառարանագրութեան պահանջներին համապատասխանող բառարան, որը անցած ավելի քան 160 տարում չի կորցրել իր գիտական ու գործնական արժեքը և միշտ օգտագործվել ու օգտագործվում է տարբեր մասնագիտութեան տեր անձանց կողմից:

Բառարանը կազմելիս հեղինակներն օգտագործել են երկու կարգի աղբյուրներ՝ բառարաններ և V—XVII դարերի Հայ ու օտար ձեռագիր ու տպագիր մատենագրական աղբյուրներ:

Բառահոգվածները մշակված են բարձր մակարդակով. նախ քերականորեն ընդլայնված է ամեն մի գլխաբառ, այսինքն՝ նշված են գրա խոսքի մասային պատկանելութիւնը և քերականական կարգերը, հետո բերված են հունարեն, լատիներեն, թուրքերեն, երբեմն էլ պարսկերեն, արաբերեն,

19 Մ. Չ ա մ չ ե ա ն ց. Պատմութիւն Հայոց. Հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 768:

20 Ֆ. Ֆ ե յ դ ի. Անդրադարձութիւններ Մխիթար Աբբաժօր բառարանին շուրջ. — «Բազմավէպ», Վենետիկ, 1950, էջ 311—312:

21 Հ. Յ ո վ հ ա ն ն է ս Թ ո ռ ո ս ե ա ն. Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացու. Վենետիկ, 1932, էջ 352:

Ֆրանսերենն համարժեքները, տարբերակված ու բացատրված են իմաստներն ու նրբիմաստները, որոնք հաստատված են բնագրային վկայություններով: Առանձնացված են համանուն բառերը, ինչպես նաև տվյալ գլխաբառով կազմված հարադրությունները, որոնցից յուրաքանչյուրը տրված են նոր տողից: Գլխաբառերի բացատրությունները տրված է տարբեր եղանակներով՝ նկարագրությամբ, հոմանիշների թվարկմամբ, օտար լեզուներով թարգմանությամբ, հղումներ կատարելով և այլ միջոցներով: Վկայությունները հիմնականում տրված են ժամանակագրական հաջորդականությամբ: Բառարանում բազմաթիվ բառեր նաև ստուգաբանված են: Այս և բազմաթիվ այլ հատկանիշների հիման վրա ՆՀԲ-ն գերազանցում է ՀՀԲ-ին: Նրա բազմաթիվ առավելություններից նշենք միայն մեկը. այսպես եթե ՀՀԲ-ում ակն գլխաբառով կազմված հինգ հարադրություն կա, ապա ՆՀԲ-ում դրանց թիվը հասնում է երեսունի: Այդ նույն պատկերը կարելի է տեսնել նաև շատ այլ բառերի վերաբերյալ:

ԲՀ-ից հետո անցած հարյուրամյակների ընթացքում հայտնաբերված հազարավոր նոր ձեռագրերը, հրատարակված հարյուրավոր նոր մատյանները շրջանառության մեջ են դնում հազարավոր նոր բառեր: Այդ բանը կարելի է ցույց տալ թեկուզ միայն մեկ՝ Ա տառով սկսվող բառերի քանակը տարբեր բառարաններում միմյանց հետ համադրելով: Այսպես, օրինակ եթե ԲՀ-ում Ա-ով սկսվող բառերի քանակը 1070 է, ապա ՀՀԲ-ում 3038 է, իսկ ՆՀԲ-ում՝ 8567:

Այսպիսով, ՆՀԲ-ն ոչ միայն նորմատիվ բացատրական, այլ նաև ուղղագրական, ընդլայնողական, պատմական, ստուգաբանական, դարձվածաբանական, հոմանիշների բառարան է, որը հիմք է դարձել հետագա մեր գրեթե բոլոր բառարանների համար: Չկա գրաբարյան կամ աշխարհագրյան որևէ բառարան, որի հիմքում ինչ-որ չափով ընկած չլինի ՆՀԲ-ն:

ՆՀԲ-ի հեղինակները, օգտագործելով մեր նախորդ բառարանները և օգտվելով ժամանակի օտարերկրյա բառարանագրական առաջավոր փորձից, ստեղծել են մի այնպիսի բառարան, որը գերազանցում էր ոչ միայն մեր բոլոր բառարաններին, այլ նաև ապահովում է տվյալ ժամանակի եվրոպական բառարանագրության մակարդակը: ՆՀԲ-ի շնորհիվ, ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Զահուկյանը, «...գրաբարի բառապաշարի ուսումնասիրությունը այդ շրջանում կատարելության է հասնում»<sup>99</sup>: Բայցևայնպես ինչպես ամեն մի աշխատանք, այդպես էլ ՆՀԲ-ն չէր կարող իսպառ զերծ լինել թերություններից, որոնք ժամանակին նկատելի է մեր մեծ հայագետ-լեզվաբան Նորայր Բյուզանդացին և գրաբարյան բազմաթիվ նորահայտ բնագրերի հիման վրա փորձել է վերացնել դրանք, լրացնել պակասն ու բացթողումները: Նրա կատարած սրբագրությունների մասին տեղեկանում ենք Ժնևի համալսարանի գիտաշխատող, լեզվաբան Մարտիրոս Մինասյանի կատարած աշխատանքի շնորհիվ: Նա նմանահանություն է դրանակով, սահմանափակ տպաքանակով, հինգ հատորով հրատարակել է ՆՀԲ-ն՝ Նորայր Բյուզանդացու աշխատանքի հետ միասին: Մ. Մինասյանն իր հրատարակության առաջաբանում գրում է. «Ինչպես նկատելի է, Նո-

22 Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Հայկական բառարանագրություն (անգլերեն). - «Բառարանագրության միջազգային հանրագիտարան», Նյու Յորք - Բեռլին, 1991, էջ 2367-2371:

րայրը բառարանի վրայ ըզգամաբնոյթ աշխատանք է կատարել: Տպագիր էջերի ներսում կամ լուսանցներում մատիտով, իսկ մէջ ընդ մէջ աւելացրած թերթերի վրայ թանաքով մանրատառ ուղղել է ամեն կարգի վրիպումներ ու սխալներ, գծերով ջնջել կեղծ բառեր, դասականների համար բերել մատենագրական դասական վկայություններ, ձեռագրերում ու տպագիրներում իր յայտնաբերած նոր բառերի համար մշակել վկայուած բառայօդուածներ, հաւանաբար իր «Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն» (Կ. Պոլիս, 1884) աշխատութեան համար լուսանցներում շատ բառեր թարգմանել ֆրանսերէնի եւ երբեմն էլ նշել դրանց յունարէնները»<sup>23</sup>:

Ն. Բյուզանդացու կատարած աշխատանքի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար բերենք միայն մեկ բառահոգովածի օրինակ:

ՆՀԲ, հ. 1

Անլաուութիւն. դ. Անլաւն լինել. յոռութիւն. մէթիւլիւք. Հեռացաւ հորի տեառն ի սաւուղայ վասն անլաուութեան. Տօնակ:

Ն. Բյուզանդացին ներդիր թղթի վրա ավելացնում է. «Անլաուութիւն. կարող էր մեծ աստուածն Ապողոլին կեցուցանել զքեզ եւ տալ փրկութիւն քեզ. այլ վասն անլաուութեանդ քոյ եւ անզիղջ սրտիւ՝ տուեալ վճիռ. վկ. Թէոպոնտոսի եպիսկոպոսի եւ Թէոփնայ, կախարդի. 592»:

Ահա այս ձևով է կատարում իր սրբագրությունները Ն. Բյուզանդացին: Բայց քանի որ նա գրել է շատ մանր ձեռագրով, որից էլ պատճենահանվել է քսերոքսով, այդ պատճառով շատ տեղերում նրա սրբագրությունները դժվարընթեոնելի են: Մեր կարծիքով՝ Ն. Բյուզանդացու աշխատանքը եթէ հրատարակվեր տպագրական եղանակով, ապա շատ ավելի մեծ կլիներ դրա օգուտը հայագիտության համար:

Նկատի ունենալով, որ ՆՀԲ-ի հրատարակությունից արդեն անցել էր շուրջ մեկուկես դար, և բառարանից մնացել էին մատենագիտական հազվագյուտ օրինակներ, Երևանի պետական համալսարանը 1979–1981 թթ. նմանահաման եղանակով, հինգ հազար տպաքանակով վերահրատարակեց ՆՀԲ-ն, որը գարձավ բազմահազար մասնագետների սեղանի գիրքը:

## ПРОЦЕСС РАЗВИТИЯ ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛЕКСИКОГРАФИИ

### ԴԵՎՈՐԿ ԹՕՏՄՆՅԱՆ

#### Р е з ю м е

Основы древнеармянской лексикографии были заложены в V в. Однако до X в. настоящих словарей не было. Позже в армянских манускриптах появляются разные словари. В конце XVII в. издается первый толковый словарь древнеармянского языка, за которым следуют более совершенные словари: "Словарь древнеармянского языка" (1749–1769), "Новый словарь древнеармянского языка" (1836–1837), который считается лучшим словарем из всех словарей армянского языка.

<sup>23</sup> Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. սրբագրուած եւ ճոխացուցած Նորայր Բիւզանդացու ձեռքով, հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնև, 1990, էջ Ա: